Փ. Ասիա։ — Ի կողմանս ինչ Պոնտոսի և Փ. Հայոց՝ որպէս յԱԿն, գոն և Հայհոռոմ անուանեալք յունաՀեսք հայալեզուք։

33. ԿՐԹՈՒԹԻՒՆ. ՈՒՍՄՈՒՆՔ. — Ի բանսիրական հրահանգս և յուսմունս՝ յեանեալ դասնի ազգս մեր 'ի սակս քաղաքական վիճակին, թէպէտ և յառաջադէմ և քաջառուս քան զայլս յարևելեայ ազգաց։ Բայց 'ի բուն Հայաստան նուազ և աղօտ է լոյս ուսմանց, որ ոչ սակաւ բարգաւաճէ արդ յօտար կողմանս, 'ի Կոստանդնուպոլիս, 'ի Զմիւռնիա, յԱրմաշ, և այլն, յորս են վարժարանք. և 'ի հեռագոյն ևս վայրս, 'ի Տփխիս, 'ի Մոսկուա, 'ի Կալկադա, 'ի Բարիզ և 'ի Վենետիկ. ընդ որս և երկոքին մենաստանք Մխիթարեանց 'ի Վենետիկ և 'ի Վիեննա սատարիչք են Հայ դպրութեանց՝. ոչ սակաւ օժանդակք են և Ս. Յակոբայ վանքն Յերուսաղէմ, Շուշւոյ և Սիւնեաց առաջնորդարանքն 'ի Հայս։ Վարժարանացն գործակիցք են յայժմուս 'ի բարգաւաճանս ուսմանց՝ օրագիրք ազգայինք, տպագրարանք, թարգմանութիւնք գրոց և ուսումն օտար լեզուաց. որոք մարթ է ակն ունել առաւել ևս օգտի և բարգաւաճանաց՝ խոհական և զգոյշ հետևողութեամբ օտարաց, և քաջալեր և խաղաղասէր խրախուսանօք եկեղեցական և աշխարհիկ աւագ որերոյ ազգիս։

34. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԵՒ ԲԱԺԻՆՔ. — Սկիզբն քաղաքական կենաց և վարչութեան Հայոց՝ ժամանակակից է հնագունիցն ազանց, իբր 2500 ամաց նախ քան զգալուստ փրկչին հաստատեալ 'ի Հայկայ, և տեւեալ նահապետական և թագաւորական իշխանութեամբք սուղ ինչ պակաս 3000 ամս, երկոքումք հարստութեամբքն, Հայկազանց և Պարթեւաց կամ Արշակունեաց. առ որոք 'ի 15 փոքր աշխարհս և պետութիւնս բաժանէին Մեծ Հայք, և 'ի 190 գաւառս (35), իսկ 'ի վիճակս յոլովս մանունս. որոց տեարքք և վարիչք ընդ ձեռամբ նահանգապետացն կամ նախարարաց կային, և նոքա մերթ հնազանդեալք և մերթ սակաւ ինչ հարկեալով թագաւորին Այրարատայ կամ նահապետին Հայոց. և նա երբեմն աղատ և ինքնիշխան միապետ, և երբեմն 'ի հարկի կալով հզօր և տիեզերակալ թագաւորացն Ասիոյ՝ Ասորեստանեայց, Մարաց և Պարսից, դամ մի և Յունաց։ Յետ բառնալոյ հարստութեան Արշակունեաց (յամին 428), բարձաւ իսպառ միահեծան տէրութիւն Հայոց, և եկամուտ ազգք՝ Պարսք, Յոյնք, Արաբացիք, Թուրքք և Թաթարք կալան զմեծ մասն աշխարհին և ըստ իւրեանց օրինաց վարէին. բայց մինչև յԺԱ և ԺԲ դարս տակաւին տիրէին և իշխանք Հայոց՝ գաւառաց գաւառաց. մանաւանդ 'ի Ժ և 'ի ԺԱ դարս, յորս Բագրատունիք, Արծրունիք և Սիւնիք զմեծ կէս աշխարհիս վարէին հայրենի օրինօք. յետ այնորիկ 'ի Սիւնիս և 'ի Խաչէն (որ է Արցախ) միայն մնացին պայազատք Հայկազանց՝ որք և մինչև 'ի մերս դար որդի 'ի հօրէ ժառանգութեամբ հրամայէին փոքունց վիճակաց և գիւղից, մեծ-փոքր կոչելով պատուոյ անուամբ, յորոց դատնին ցարդ սակաւք ոմանք։ Յետ արշաւանաց Սելջուկեանց և Թաթարաց 'ի ԺԱ-ԺԴ դարս, դրեաթէ խսպառ ընդ լծով օտարաց եկաց և կայ աշխարհս. մասն մի Պարսից՝ 'ի վաղուց հետէ, և մասն մի Օսմանեանց Թուրքաց՝ որք յաջորդեցին Սելջուկեանց և Թաթարաց, և միւս մասն այժմ Ռուսաց, որք նախ զհիւսիսակողմն աշխարհիս կալան ժառանգելով զթագաւորութիւնն Վրաց, և ապա յայսմ դարու հատին 'ի Պարսից զԱրցախ և զՈւտի, զՍիւնիս, զԳիւղական և զմասն Այրարատայ. և յՕսմանեանց զայլ մասն Այրարատայ և զՏայոց. որով Պարսից մնան այժմ Պարսկահայք և մասն Վասպուրականի և Աղուանականն Հայոց. իսկ Օսմանեանք ունին զարևմտեան և զմեծ մասն աշխարհին, զմասն Տայոց, զԲարձր և զԴիհայս, զԱղձնիս, զՏարօն, զԿորդուս, զՄոկս զմասն Այրարատայ և զմեծ մասն Վասպուրականի։ — Եւ այսպէս զատանին սահմանք երեցուն ինքնակալ պետութեանցն 'ի Հայս. 'ի հիւսիսոյ արևմտից յԵգեբայ մինչև յԱրբա-կէջ (18)՝ ընդ մէջ Տայոց և Այրարատայ բաժանի Հայաստան ընդ Ռուսս և ընդ Օսմանեանս. Արևելեայ ձեռ զսահմանն ցխառնուրդ իւր յԵրասխ, թողլով զաջակողմն կամ զարևմտեանն յՕսմանեանս, զարևելս 'ի Ռուսք. 'ի խառնրդոց Երասխայ իջանէ սահմանն ընդ հարաւ և դառնայ յարևելս առ Սինեկտաղ լերամբ (8) և առ Մասեաք. որ անջրպետք արձանանան երեցուն պետութեանցն. ըստ ելից հիւսիսոյ Այրարատայ Երասխ դեռ իջեալ ձեռ զամենայն սահմանն Ռուսաց և Պարսից մինչև ցխառնուրդ իւր 'ի Կուր, զհարաւակողմն թողլով սոցա յետնոցս. իսկ ըստ հարաւոյ Այրարատայ իջանէ դիծ անջրպետութեան բաժնից Օսմանեանց և Պարսից, ընդ մէջ Պայեզիտայ և Մակուայ, և ընդ մէջ երկուց ծովուցն Վանայ և Որմիոյ, ցՐէվանտոզ գաւառ. Քրդաց և ցՁակրոս լերինս, ուր սպառին Հայք. ամենայն արևմտակողմն՝ Օսմանեանց գոլով վիճակ, և արևելքն Պարսից։ Այսոքիկ այսպէս սահմանեցան և հաստատեցան յամին 1828 և 1829 յետ պատերազմաց Ռուսաց ընդ Օսմանեանս և ընդ Պարսս, և դաշնագրութեանցն յԱդրիանուպոլիս և 'ի Թուրքմէնչայ (110). և թէպէտ յայժմեան ժամանակիս 'ի վերսին դրդռեալ մարտի ընդ Ռուսս և Օսմանեանս՝ մեծացան յիրեբաց սահմանս, այլ զի չև է իրացն հաստատութիւն առեալ, մեք ըստ առաջնոցն եդելոց բաժանմանց՝ յերիս զատուցանեմք զՀայաստան, յՕսմանեան կամ Թուրքահայք, 'ի Պարսկաստան՝ կամ Պարսկահայք, և 'ի Ռուսական կամ Ռուսահայք։

Այլ մինչև մնեալ 'ի նկարագիր նոցուն՝ կարգեսցուք զնախնեացն բաժանմունս գաւառաց, պատշաճեցուցանելով նոցին զայժմեան վիճակսն, որքան և կարեմք։